—Դէ՛, ախպէր, ըսեց, էլի՛ Հրիսայ կի՛, ես կ'երթամ։

Ախպէրն էլաւ նստաւ. էդի կոպալ դրեց թէւին ու ճամբախ տուեց առէջ, շրջաւ սարի էն յերես։ Դէւեր տեսան, օր Դաւիթն էկաւ, փախան մտան յէրի մէջ ու ջաղէի քար տուին դէմ ուրանց։

Դաւիթ գնաց տեսաւ, օր քառսուն կով լէ մորթած էն, լըցած էն քառսուն կանթնէ պղնձի մէջ ու օջախ շինած էն, դրած օջախի վրէն, քլքլան կ'էփի։

Դաւիթ վերցուց քառսուն կանթէն պղինձ շրջեց կրակի վրէն, քառսուն կաշին լէ ժողվեց լցեց մըչ պղնձին ու գնաց, կայնաւ էրի դուռ, քար քաշեց, թալեց մէկդէն ու—Դէւե՛ր, ըսեց, մէկ-մէկ դուս արէք։

Դէւեր մէկ-մէկ դուս էկան, մէկ-մէկ կոպալ զարկեց ու շրջեց։ Քառսուն լէ սպանեց ու մտաւ մըչ էրին. գնաց, տեսաւ, օր ըդոնց գոմ քառսուն հատ ձի էր կապուկ. որ մէկի քամկի վրէն ձեռ կ'ճխտէր, կ'տղղէր ձեռաց տակ։

Գնաց վերև, մէկ քուռակ մ'էր կապուկ, իրեք մինագ, ձեռ ճխտեց, ձեռաց հետ բանձրցաւ [1]։—Ը՛հա, ըսեց, իդա իմ ձին է։

Էկաւ, տեսաւ, օր ուրանց նստուածք դուննիի մալ խաղինէն բերած էն լըցած. դարձաւ ու դուս էլաւ, ջաղէի քար տուեց դռան դէմ ու դարձաւ։

Էկաւ, կոպալն իցկեց պղնձի կանթ ու թալեց փիջի վրէն ու առաւ, էկաւ էն գեղն, օր Հրիսայ էր տարի. էկաւ, օր հացկերուտեն էրած էն պրծած, տէրտներ հաց կ'օրհնէն։

Ըսեց.—Ձէն մ'էնէք, ձըզի մէկ բան կ'ըսիմ։

Կաշիք հանեց, թափեց. ամէկ էկաւ, ուր տաւրի կաշին ճանչցաւ։

---

[1]) Ա. վարիանտում Դաւիթ ինքն իրան խօսում է. «Քեռի-Թորոս, բիրտդի քըզի, քուռակէ-ջալլաթին տաս ընձի»։